**15.01.26 - 15.01.26**
15:00
**Անցանց**
Գրանցումը փակ է
☐

[Պահպանել Google օրացույցում]

**Ս.թ. հունվարի 15-ին՝ ժամը 15:00-ին, «Էրազմուս+» ազգային գրասենյակի (NEO**
) հետ համագործակցության շրջանակում տեղի կունենա տեղեկատվական հանդիպում, որը նվիրված է «Erasmus+ Virtual Exchanges» ծրագրերին։

Հանդիպման ընթացքում կներկայացվեն՝

- «Erasmus+ Virtual Exchanges» ծրագրերի նպատակներն ու շրջանակը,
- վիրտուալ փոխանակումների ձևաչափերը (առցանց քննարկումներ, համատեղ ուսուցում, միջմշակութային երկխոսություն և այլն),
- դիմումների ներկայացման գործընթացը, գնահատման չափանիշները և ծրագրի իրականացման հիմնական պահանջները,
- հաջող դիմում ներկայացնելու գործնական խորհուրդներ։

Հանդիպումը նախատեսված է՝

- համալսարանների ակադեմիական և վարչական աշխատակազմի,
- երիտասարդական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ինչպես նաև երիտասարդության, կրթության, միջմշակութային երկխոսության և կարողությունների զարգացման ոլորտներում գործող կազմակերպությունների ներկայացուցիչների համար։

Մասնակցելու համար լրացնել գրանցման հայտը՝
**https://forms.gle/Vq42JVxNvFF3pDA49**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000

info@ysu.am